ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

16 ՓԵՏՐՎԱՐԻ
2026 թ.
№ 2 (1157)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԳՐՔԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ԱՐՏԱՑՈԼԱՆՔՆ ԵՆ

Գիրք նվիրելու օրը Հայաստանում նշում են Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ին: Այս տոնը 2008 թվականից սկսած նշվում է մեզանում՝ տարեցտարի ստանալով համազգային բնույթ և ընդգրկելով հանրության ամենատարբեր շերտեր:

Տոնը սահմանվել է Հայաստանի գրողների միության նախկին նախագահ Լևոն Անանյանի նախաձեռնությամբ և ՀՀ կառավարության որոշմամբ:

Օրվան նվիրված տարաբնույթ միջոցառումները խորհրդանշում են գրքի և ընթերցանության հանդեպ հայ ժողովրդի դարավոր սերը, որ սերնդեսերունդ փոխանցում է մեր գրական, հոգևոր-մշակութային արժեքները:

Տոնի նպատակն է վերահաստատել գրքի և ընթերցանության հանդեպ մեր սերը, այդ օրը իրար գրքեր նվիրել ու շարունակել կարդալ:

Թվային տեխնոկոգիաների մարտահրավերների համատեքստում շատ կարևոր է, որ մենք կարողանանք պահպանել գրի ու գրքի պաշտամունքը, կարողանանք չկորցնել գիրք ընթերցելու հրճվանքը, որին ոչ մի թվային տեխոլոգիա չի կարող փոխարինել:

«Գրքերը աշխարհի արտացոլանքն են, որոնք պարունակում են նրա անսահման խորությունը, բազմազանությունն ու անկախատեսելիությունը». Ժան Պոլ Սարտրի խոսքերին ավելորդ է ինչ-որ բան ավելացնել:

Մեր ուխտը

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս,
Ու գնում ենք մեր ճամփով,
Մրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մրրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դրոշը սրբազան,
Ու մենք չունենք տեղ ու դադար՝
Երկրից երկիր ցիրուցան:

Բայց գնում ենք մենք անվեհեր
Զարկերի տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

Հովհաննես Թումանյան

***

Հայերենը՝ իբրև Արարատյան լեզու, կոչվում է «Աղոթքի լեզու», այն աստվածային ճոխ ու աննման լեզու է:

Նիկողայոս Մառ

ՀՊՄՀ պատվիրակությունը Դրեզդենում մասնակցեց աշխատաժողովի

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցեց Դրեզդենի տեխնիկական համալսարանում (Գերմանիա) մեկնարկած «ՀՀ-ում ներառական, թվային և կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի ստեղծում» (KPI_4HE) Էրազմուս+ նախագծի աշխատաժողովին:

Եռամյա ծրագրի համակարգողը Երևանի պետական համալսարանն է. գործընկերները՝ ԿԳՄՍՆ-ն, ՈԱԱԿ-ը, հայաստանյան 5 բուհ, այդ թվում՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը:

Եվրոպական գործընկերներն են Օլդենբուրգի, Դրեզդենի տեխնիկական և Ջենովայի համալսարանները:

KPI_4HE ծրագրի նպատակն է բարելավել բարձրագույն կրթության համակարգի կառավարումը, համալսարանների ռազմավարական պլանավորումը, որոնք կնպաստեն որակյալ ու ներառական, թվային և կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության զարգացմանը Հայաստանում՝ բարձրագույն կրթության գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) մշակման և ներդրման, ինստիտուցիոնալ հետազոտությունների կառուցակարգերի զարգացման և պլանավորման ծառայությունների գործարկման, ինչպես նաև հաստատությունների հավատարմագրման պետական չափանիշների վերանայման միջոցներով (համաձայն ԳԱՑԱՇ-ի):

Մեր հարցազրույցը Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ՝ ԱՌԱՆՑ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ԿՈՐՍՏԻ.

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ

-Դուք Մանկավարժական համալսարանի ղեկավարումը ստանձնեցիք բավական բարդ ժամանակահատվածում: Ի՞նչն է Ձեզ համար ամենակարևորը այս պատասխանատու գործում:

-Այդ պատասխանատվության մեջ ինձ համար ամենակարևորը կայունության և վստահության ապահովումն է: Մանկավարժական համալսարանը միայն բուհ չէ. այն կրթական համակարգի առանցքային օղակ է, և յուրաքանչյուր որոշում պետք է լինի հաշվարկված, երկարաժամկետ և հիմնված կրթության նկատմամբ պատասխանատվության վրա:

- Ինչ է Ձեզ համար նշանակում «մանկավարժ» բառը:

-Մանկավարժը գիտելիք փոխանցողից շատ ավելին է: Դա արժեքներ ձևավորող, մտածողություն կերտող և օրինակ հանդիսացող մարդ է: Մանկավարժ լինելը մասնագիտություն չէ միայն, դա աշխարհայացք է:

-Որո՞նք են այսօր համալսարանի համար

ամենահրատապ փոփոխությունները:

-Առաջնահերթ են կրթական ծրագրերի արդիականացումը, գործնական բաղադրիչի էական ուժեղացումը և կառավարման արդյունավետ ու թափանցիկ համակարգի զարգացումը:

- Ինչպիսի՞ն եք տեսնում համալսարանի դերը կրթական համակարգում՝ որպես գաղափարական կենտրոն:

-Մանկավարժական համալսարանը պետք է լինի կրթական մտքի ձևավորման, մասնագիտական քննարկումների և արժեքային օրակարգի հարթակ՝ ազդելով հանրային կրթական դիսկուրսի վրա:

- Այսօր ինչպիսի՞ ուսուցիչ պետք է պատրաստի Մանկավարժական համալսարանը:

-Մենք պետք է պատրաստենք ժամանակակից, ճկուն մտածողությամբ, թվային և հաղորդակցական հմտություններով զինված ուսուցիչ, որը միաժամանակ ունի ամուր արժեքային հիմք:

- Ինչպե՞ս եք գնահատում գործնական բաղադրիչի դերը ուսուցիչների պատրաստման գործում:

-Գործնական փորձը որոշիչ է: Առանց դրա հնարավոր չէ պատրաստել լիարժեք մասնագետ: Ուսուցիչը պետք է կրթական միջավայրում ինքնավստահ գործի՝ դեռ ուսանողական տարիներից:

- Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում կրթական ծրագրերում:

-Կենտրոնանում ենք ժամանակակից մանկավարժական մեթոդների, ներառական կրթության, միջառարկայական մոտեցումների և թվային կրթության զարգացման վրա:

- Ինչպե՞ս եք պատկերացնում ուսանողի մասնակցությունը համալսարանի կյանքին:

-Ուսանողը պետք է լինի համալսարանական կյանքի ակտիվ մասնակից՝ նախաձեռնող, պատասխանատու և համահեղինակ այն միջավայրի, որտեղ սովորում է:

- Ի՞նչ եք սպասում Մանկավարժականի ուսանողից:

-Մասնագիտական պատասխանատվություն, շարունակական ինքնազարգացման ձգտում և քաղաքացիական գիտակցություն:

-Ինչպե՞ս եք գնահատում պրոֆեսորադասախոսական ներուժը:

-Մենք ունենք մեծ փորձ և գիտական ներուժ, որը պետք է շարունակաբար համադրվի նոր գիտելիքի, նոր մեթոդների և միջազգային փորձի հետ:

-Ինչպե՞ս կարելի է խթանել դասախոսի շարունակական զարգացումը:

-Վերապատրաստումների, միջազգային համագործակցության, ակադեմիական շարժունության և արդար գնահատման համակարգի միջոցով:

-Ինչպիսի՞ ակադեմիական միջավայր եք ցանկանում ձևավորել:

-Բաց, վստահելի, փոխհարգանքի վրա հիմնված միջավայր, որտեղ խրախուսվում են ազատ միտքն ու պատասխանատու խոսքը:

-Ո՞րն է այսօր հայկական կրթության ամենամեծ մարտահրավերը:

-Կրթության որակի բարձրացումը՝ առանց արժեքային հիմքերի կորստի:

-Ի՞նչ արժեքներ պետք է փոխանցի ուսուցիչը՝ անկախ առարկայից:

-Արժանապատվություն, պատասխանատվություն, հանդուրժողականություն, քննադատական մտածողություն և գիտելիքի հանդեպ սեր:

-Ձեր կարծիքով՝ կարո՞ղ է կրթությունը փոխել հասարակությունը:

-Այո, կրթությունն ամենախորը և կայուն փոփոխություններն ապահովող ուժն է հասարակության համար:

-Եվ վերջում՝ Ձեր հիմնական ուղերձը հասարակությանը:

-Մանկավարժական համալսարանը բաց է փոփոխությունների համար, սակայն հավատարիմ է իր հիմնական առաքելությանը՝ կրթել գիտակից, արժեքային և պատասխանատու սերունդ:

Հրույցը Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՀՊՄՀ-ում անցկացվեց ռուսաց լեզվի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիր

Մանկավարժական համալսարանում ռուսաց լեզվի ուսուցիչների համար անցկացվեց «Ռուսերենը որպես օտար լեզու գործնականում. տեսությունից մինչև պրակտիկա» թեմայով մասնագիտական զարգացման ծրագիրը:

«Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամի նախաձեռնությունն իրականացվեց ՀՊՄՀ-ի աջակցությամբ՝ «Ռուսաց լեզվի անվճար դասընթացներ Հայաստանում» նախագծի շրջանակներում. մասնակցեց հանրապետության ավելի քան 50 մանկավարժ:

Ծրագրի վերապատրաստողները Մոսկվայի պետական մանկավարժական, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանների, ՀՊՄՀ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի՝ ռուսերենը որպես օտար լեզու դասավանդելու ոլորտում առաջատար փորձ ունեցող մասնագետներն են:

Մասնակիցներին ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի անունից ողջունեց ՀՀ-ում ՌԴ դեսպանատան խորհրդական և ՌԴ կրթության նախարարության ներկայացուցիչ Միխայիլ Վոժդաևը: Նա ընդգծեց ռուսաց լեզվի ուսուցիչների հատուկ դերը Հայաստանի և Ռուսաստանի միջև հումանիտար կապերի ամրապնդման գործում և ՌԴ դեսպանատան անունից շնորհակալագրեր հանձնեց մի քանի ուսուցչի. «Դուք ոչ միայն ռուսաց լեզվի, այլև ռուսական մշակույթի դեսպաններն եք: Ձեր շնորհիվ Հայաստանի բոլոր մարզերի երեխաները դառնում են մեր երկրի բարեկամներ և մեր ժողովուրդների միջև դարեր շարունակ գոյություն ունեցող բարեկամության շարունակողներ»,-նշեց նա:

ՀՊՄՀ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանն էլ ընդգծեց բուհի և «Մեր ապագան» հիմնադրամի միջև երկարատև համագործակցության կայունությունն ու արդյունավետությունը՝ նշելով, որ արդեն մի քանի տարի հաջողությամբ իրականացնում են մասնագիտական զարգացման համատեղ ծրագրեր:

Միջոցառման ավարտին մասնակիցները հավաստագրեր ստացան: Ինչպես նկատեցին նրանք՝ ծրագիրը դարձավ կարևոր մասնագիտական հարթակ՝ փորձի փոխանակման, արդիական մարտահրավերների քննարկման և ռուսերենը որպես օտար լեզու դասավանդելու ոլորտում գործնական լուծումներ գտնելու համար:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

«Մերօրյա մանկավարժությունը նվիրում է, ինքնակրթվելու կարողություն». Նարինե ԳԵՎՈՐԳՅԱՆ

-Հարգարժան Նարինե Գևորգյան, որքա՞ն ժամանակ է, որ աշխատում եք ՀՊՄՀ վարժարանում: Մի փոքր ներկայացրեք Ձեր աշխատանքային ուղին:

-Հենակետային վարժարանում աշխատում եմ 2022 թվականից: Մինչ այդ աշխատել եմ Աջափնյակի ավագ դպրոցներից մեկում և «Հայ ասպետ» դպրոցում:

-Ո՞րն է այսօր հանրակրթական դպրոցի ամենալուրջ մարտահրավերը:

- Մարտահրավերները շատ են. կարծում եմ նախ և առաջ տեխնոլոգիական միջոցներն են, որ բացի օգտակար լինելուց, նաև խանգարում են: Այսօր խնդիր ունենք սովորողներին կրթության դաշտ բերելու, ընթերցել տալու, կենտրոնացման: Մանկավարժը պետք է միշտ ձեռքը զարկերակին պահի, լինի տեղեկացված, ճկուն և «ժամանակի շունչը դառնա»:

-Ինչո՞վ է պայմանավորված սովորողների անտարբերությունը կրթության հանդեպ: Նրանց անտարբերությունը փոխանցվո՞ւմ է լավ սովորողներին:

-Անտարբերությունը, իմ խորին համոզմամբ, կապված է հեռախոսներից կախվածության հետ: Օրվա մեծ մասը սովորողները անցկացնում են կարճ հոլովակներ նայելով. այդ պատճառով երկար նյութերը չեն հետաքրքրում նրանց:

Չեմ կարծում, որ փոխանցվում է լավ սովորողներին, քանի որ նրանց մեծ մասն արդեն կողմնորոշված է գալիս վարժարան: Միգուցե դա բնորոշ է միջին դպրոցի սովորողներին:

-Ինչպե՞ս կարելի է վերականգնել ուսուցչի հեղինակությունը:

-Ես չեմ կարծում, որ ուսուցչի հեղինակությունն ընկած է, համենայն դեպս, դա խիստ անհատական է: Յուրաքանչյուր դպրոցում էլ կան ուսուցիչներ, որոնք վայելում են սովորողների, նրանց ծնողների և իրենց գործընկերների սերն ու հարգանքը: Կարծում եմ՝ եթե ուսուցիչը լավ տիրապետում է իր առարկային, լավ հոգեբան է, կարեկցող և մարդկային, ունի բարձր հեղինակություն: Իսկ եթե ամեն դեպքում, որևէ ուսուցչի հեղինակությունն ընկել է, ապա միայն պետք է ինքնակրթվել, վերանայել որոշ արժեքներ:

-Սիրո՞ւմ եք Ձեր մասնագիտությունը: Ի՞նչը կարող է Ձեզ հիասթափեցնել դպրոցի ներսում:

-Եթե չսիրեի, վստահ եմ, որ չէի աշխատի դպրոցում: Ինձ կարող է հիասթափեցնել անտարբերությունը կրթության և ազգային արժեքների նկատմամբ:

-Դպրոցից դուրս ի՞նչ նախասիրություններ ունեք:

-Դպրոցից դուրս ես շատ եմ սիրում մշակութային կյանքը՝ թատրոն, կինո, թանգարաններ, ընթերցանություն...

-Ի՞նչ է մանկավարժությունը մեր օրերում:

-Մերօրյա մանկավարժությունը նվիրում է, ինքնակրթվելու կարողություն, հաղորդակցական հմտություններ և ճկունություն՝ դիմակայելու 21-րդ դարի մարտահրավերներին:

- Էլեկտրոնային մատյաններից մինչև ամենատարբեր պահանջներ. ուսուցչի ծանրաբեռնվածությունը հնարավո՞ր է տեղավորել ժամանակի մեջ:

-Ծանրաբեռնվածությունը շատ է, սակայն նվիրյալ մանկավարժները կարողանում են տնօրինել իրենց ժամանակը:

-Բնութագրեք Ձեզ և սովորողներին, որոնց դասավանդում եք:

-Իմ սաները խելացի են, նպատակասլաց, համեստ, պատրաստակամ:

-Ի՞նչը կփոխեիք դպրոցում, եթե հնարավորություն տրվեր:

-Կփոխեի կրթական մեթոդների, ծրագրերի, չափորոշիչների որոշ կետեր:

Նարինե ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՊՄՀ հենակետային վարժարան (ավագ դպրոց), Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

- Ի՞նչ կուզեիք ասել Ձեր գործընկերներին ու աշակերտներին:

-Իմ գործընկերներին համբերություն և նախանձախնդրություն կմաղթեի, իսկ սաներիս՝ համարձակություն և տոկունություն: Իսկ ընդհանրապես բոլորին՝ առողջություն և խաղաղություն:

-Մոտենում է գիրք նվիրելու օրը. ի՞նչ խորհուրդ ունի այն Ձեզ համար:

-Ես իմ դասավանդած դասարաններում փորձում եմ այն տոն դարձնել, քանի որ շատ եմ կարևորում գրքի դերը մարդու կյանքում: Ես և սաներս սպասում ենք այդ օրվան. արդեն իսկ քննարկել ենք, ինձանից խորհուրդներ են հարցրել՝ հեշտ և ճիշտ կողմնորոշվելու համար:

Զրույցը Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Ճիշտ պահին աշակերտի կողքին լինելու և ոգեշնչելու առաքելությունը

Ես ծնվել եմ Կոտայքի մարզի Զովունի գյուղում, իսկ արմատներով ապարանցի եմ՝ իմ մեջ կրելով ապարանցուն բնորոշ արժանապատվությունն ու անկոտրում կամքը: Այս հատկանիշները մշտապես ուղեկցել են ինձ կյանքի տարբեր փուլերում՝ հատկապես իմ մասնագիտական կայացման ճանապարհին:

Սովորել եմ Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցում: Իմ բոլոր ուսուցիչներն իրենց աշխատանքի նվիրյալներ էին և մեծ ազդեցություն են թողել իմ աշխարհայացքի ձևավորման գործում: Սակայն առանձնահատուկ երախտագիտությամբ եմ հիշում իմ առաջին ուսուցչուհուն, որն ինձ համար մանկավարժի իսկական օրինակ է, ինչպես նաև պատմության ուսուցչուհուս, որը մեծ դեր է ունեցել իմ մասնագիտական ճանապարհի կայացման գործում:

Հայրենիքի նկատմամբ անսահման սերն ու հետաքրքրությունն ուղղորդեցին ինձ ընտրել պատմաբանի մասնագիտությունը: Դեռ վաղ տարիքից ձևավորված հետաքրքրությունը սեփական երկրի պատմության ու արժեքների հանդեպ ժամանակի ընթացքում վերածվեց գիտակցված ընտրության՝ կյանքը նվիրել պատմության ուսումնասիրմանն ու փոխանցմանը:

2019-2023 թթ. սովորել եմ ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի պատմություն բաժնում, իսկ 2023-2025 թթ. ուսումս շարունակել եմ հասարակագիտության բաժնում՝ ստանալով մագիստրոսի որակավորում:

Համալսարանական №57 հիմնական դպրոցում աշխատում եմ մոտ 3 տարի, և կարող եմ ասել, որ մեր օրերում ուսուցչի աշխատանքն այնքան էլ բարդ չէ. մարտահրավերներ միշտ կան, և տարբեր հետաքրքրություն ունեցող աշակերտներին դասի մեջ ներգրավելը պահանջում է համբերատար և ստեղծագործ մոտեցում: Սակայն ամեն ինչ դառնում է հաճելի և արժեքավոր, երբ աշխատանքդ կատարում ես սիրով, այդ ժամանակ ոչինչ չի կարող խանգարել քեզ և աշակերտին՝ միասին սովորելու ճանապարհին:

Ինձ համար առանձնահատուկ տեղ ունի ուսուցիչ-աշակերտ ջերմ և, ինչու ոչ, ընկերական հարաբերությունները: Իմ առաքելությունը միայն մասնագիտական գիտելիք փոխանցելը չէ, այլ ճիշտ ժամանակին աշակերտի կողքին լինելը, նրան ուղղորդելը և ոգևորելը՝ մարդկային արժեքներ ձևավորելու և կյանքի յուրաքանչյուր փուլում վստահ քայլերով առաջ շարժվելու համար:

Մասնագիտական հաջողությունների սկզիբն ինձ համար դրվեց 2024թ. կամավոր ատեստավորմամբ, որտեղ ցուցաբերեցի գերազանց արդյունք, սակայն ինձ համար ամենակարևոր հաջողությունը աշակերտներիս սերն ու վստահությունն է, որը յուրաքանչյուր օրը դպրոցում դարձնում է էլ ավելի հաճելի և իմաստալից:

Լաուրա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՊՄՀ №57 հիմնական դպրոցի պատմության և հասարակագիտության ուսուցչուհի

Ուսուցչի աշխատանքն ինձ համար նշանակում է յուրաքանչյուր օր բացահայտել նոր աշխարհներ՝ ոչ միայն դասագրքով, այլ աշակերտների հետաքրքրություններով, մտքերով և երազանքներով:

Ուսուցիչի առաքելությունը միայն գիտելիք փոխանցելը չէ, այլ ճիշտ պահին աշակերտի կողքին լինելն ու

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

«ՁԵՎԱՎՈՐՎԵԼ Է ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄՇԱԿՈՒՅԹ»

-Տիկին Ռուզաննա, Դուք ավարտել եք Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի գրադարանային բաժինը: Ձեր տարիներին իրականում ինչպե՞ս էր կոչվում բաժինը և ովքե՞ր էին Ձեր դասախոսները, որոնք մնացել են Ձեր հիշողության մեջ:

-1981-1984 թվականներին բաժինը կոչվում էր «Գրադարանագիտություն և մատենագիտություն»:

Իմ հիշողության մեջ մնացել են Հրաչյա Կոստիկյանը, Գուրգեն Մկրտչյանը, Բալաբեկ Մելյանը, Քնարիկ Կորկոտյանը, Ելենա Բաղդասարյանը, Կառլեն Միրզախանյանը, Միշա Հովսեփյանը (հայ. ժող. պատմություն), Իլիչ Սնխչյանը (ՍՍՀՄ պատմություն), Վերա Արտաշեսովնան (ռուս. գրակ.):

-Ձեր աշխատանքային ուղին սկսել և շարունակում եք Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում, որը վաղուց գրադարանից վերածվել է մշակութային կենտրոնի... Հե՞շտ է ղեկավարել գրադարանային այնպիսի կառույց, ինչպիսին Ավ. Իսահակյանի անվան գրադարանն է:

-Մեծ պատասխանատվություն է ղեկավարել քաղաքի առաջին գրադարանը, երբ մտահոգ և պատասխանատու ես սերունդների կրթական, մշակութային, հայրենասիրական դաստիարակության, հոգևոր մշակույթի ժառանգության պատշաճ փոխանցման, գրականության համալրման համար և այլն: Այս ամենն իրականացվում է պետական, հասարակական, կրթական, մշակութային և այլ կառույցների հետ փոխադարձ համագործակցության, ՀՀ-ում հավատարմագրված դեսպանատների հետ հուշագրերի արձանագրման արդյունքում:

Աշխատանքային ծավալները շատ մեծ են, որոնք պահանջում են մեծ ջանքեր և աշխատանքային յուրօրինակ ու ժամանակին համահունչ մոտեցումներ:

-Վերջերս հոբելյանական միջոցառումներ էիք նշում. մի փոքր ներկայացրեք:

-2025 թվականը գրադարանի համար հոբելյանական տարի էր: Այն անվանել էինք Եռատոն՝ լրանում էին Ավ.Իսահակյանի ծննդյան-150, Գրադարանի հիմնադրման - 90 և գրադարանը Վարպետի անունով անվանակոչելու 70-ամյակները: Մայրաքաղաքի «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ հանդիսություն, որին ներկա էին պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մտավորականներ, գրադարանավարներ, ընթերցողներ և այլն: Մասնակցում էին նաև գրադարանի կողմից կազմակերպվող և արդեն ավանդույթ դարձած «Ա.Իսահակյանի անվան երիտասարդ կատարողների՝ վոկալիստների» մրցույթի դափնեկիրները: Իսահակյանի պոեզիան հնչեցրին Հայաստանի վաստակավոր արտիստ Սիլվա Յուզբաշյանը և ասմունքող Գայանե Սամվելյանը: Հնչեցին նաև շնորհավորանքի և շնորհակալական խոսքեր :

-Գրադարանների թվայնացված գործընթացների համատեքստում ի՞նչ դեր ունեն այսօր գիրքն ու ընթերցանությունը...

-Գրադարանների և գրքերի թվայնացման հետ կապված ավելի մատչելի է դառնում ընթերցանությունը: Այժմ ձևավորվել է ընթերցանության նոր մշակույթ՝ ընթերցանություն թղթային և էլեկտրոնային տարբերակով: Ընտրությունը ընթերցողինն է՝ բնավ չնսեմացնելով որևէ տարբերակ:

-Ի՞նչ ճանաչված մարդկանց հետ հանդիպումների տպավորություններով են լեցուն գրադարանի պատմության էջերը...

-Գրադարանում իրենց ներկայությամբ հաճելի պահեր են պարգևել Ավետիք Իսահակյանը, Սիլվա Կապուտիկյանը, Վարազդատ Հարությունյանը, Պարիս Հերունին, Տիգրան Մանսուրյանը, Հենրիկ Հովհաննիսյանը, Էդուարդ Տեր-Ղազարյանը, Արկադի Տեր-Թադևոսյանը, Գեղունի Չթչյանը, Էդուարդ Միրզոյանը և ուրիշներ:

-Ո՞րն է 21-րդ դարի գրադարանների առաքելությունը. արդյո՞ք մերօրյա մարտահրավերները չեն սպառնում գրքին ու նրա հետ շփվելու հաճույքին:

-21-րդ դարի գրադարանները ենթադրում են տեղեկատվության ապահովում, նոր տեխնոլոգիաների ներդնում, արհեստական բանականության կիրառում և այս ամենի միջոցով հոգևոր արժեքների փոխանցում ու տեղեկատվության տրամադրում ազգաբնակչությանը: Ըստ ԻՖԼԱ-ի զեկույցների, միջազգային հետազոտողների, մասնագիտական վերլուծաբանների, վիճակագիրների, երբեք չի խամրի շփումը թղթային գրքի հետ: Այդ է վկայում աշխարհում հրատարակված գրքերի քանակը, որոնք, անշուշտ, ունեն ընթերցողական մեծ պահանջարկ:

-Ո՞րն է Ձեր ամենասիրելի գիրքը:

-Տարբեր տարիքում տարբեր են եղել իմ սիր-ված գրքերը: Անհնար է կանգ առնել մի գրքի վրա: Իսկ իմ սիրելի հեղինակներն են Հովհ. Թումանյանը, Պարույր Սևակը, Եղիշե Չարենցը, Ուիլյամ Շեքսպիրը և ուրիշներ:

-Ինչպե՞ս եք պատրաստվում Գիրք նվիրելու օրվան:

Ռուզան ԲԱՐՍԵՂՅԱՆ
«Ա.Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան»
ՀՈԱԿ-ի փնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար

- Գիրք նվիրելը համազգային տոն է, որը ևս մեկ անգամ մարդկանց հիշեցնում է հոգևոր սննդի անհրաժեշտության մասին: Գրադարանի մուտքի վահանակը հիշեցնում է այդ օրվա խորհրդի մասին: Գրադարանի ճեմասրահում, սեղանների վրա դրվում են տարվա ընթացքում ընթերցողների կողմից գրադարանին նվիրված գրքերը: Ավանդույթ է դարձել նաև այն, որ դպրոցահասակ երեխաներն իրար գրքեր են նվիրում գրադարանում: Օրվա ընթացքում տեղի են ունենում հանդիպումներ գրողների, մտավորականների հետ: Գրադարանի միջանցքների պատերը զարդարվում են գրքի մասին գովազդային վահանակներով: Գրադարանը նույնպես այդ օրը, որպես նվիրատվություն, ստանում է նոր գրքեր: Այդ օրը գրադարան են հրավիրվում նվիրատուները և արժանանում շնորհակալագրերի՝ գրադարանի ֆոնդերը հարստացնելու և համալրելու համար:

Զրույցը Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Նորարար մանկավարժությունը թվային դարաշրջանում

Երևանի №181 հիմնական դպրոցը վերջին տարիներին առանձնանում է իր կրթական միջավայրի արդիականացմամբ և տեխնոլոգիական հագեցվածությամբ: Հատկանշական է, որ դպրոցի տնօրեն Լիլիթ Արեյանի հետևողական ու նպատակային կառավարման շնորհիվ կրթօջախը համալրվել է նորագույն սմարթ էկրաններով և ինտերակտիվ գրատախտակներով, որոնք էապես վերափոխել են ուսուցման գործընթացը: Այս տեխնիկական վերազինումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին կիրառել ժամանակակից, ինտերակտիվ մեթոդներ, խթանել սովորողների ակտիվ մասնակցությունը և կրթական գործընթացը դարձնել առավել արդյունավետ ու մրցունակ:

Ժամանակակից կրթական համակարգը կանգնած է լուրջ վերափոխումների շեմին. թվայնացումը, տեղեկատվական հոսքերի արագացումը և կրթական միջավայրի փոփոխվող պահանջները ուսուցչից պահանջում են ոչ միայն առարկայական գիտելիքի խորություն, այլև տեխնոլոգիական գրագիտություն, հետազոտական մտածողություն և ստեղծագործական ճկունություն: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունեցավ «Աշխարհացույց» եռամսյա կրթական ծրագիրը, որի նպատակն էր ուսուցիչներին զինել ժամանակակից թվային գործիքներով և խթանել նախագծային-հետազոտական ուսուցման մշակույթը դպրոցում: Ծրագրի ընթացքում ես հնարավորություն ունեցա համակարգված կերպով ուսումնասիրելու և գործնականում կիրառելու նորագույն կրթական հարթակներ, թվային քարտեզագրման գործիքներ, ինտերակտիվ ներկայացման ձևաչափեր և համագործակցային առցանց միջավայրեր: Տեխնոլոգիական վերապատրաստումը սահմանափակված չէր միայն գործիքների տեխնիկական կիրառմամբ. այն ուղեկցվում էր մեթոդաբանական վերաիմաստավորմամբ՝ ինչպես կազմակերպել ուսումնառություն, որտեղ աշակերտը դառնում է ոչ թե տեղեկատվության պասիվ սպառող, այլ ակտիվ հետազոտող, վերլուծող և ստեղծող:

Եռամսյա դասընթացի ընթացքում իմ ութերորդ դասարանի սովորողների հետ իրականացրինք նախագծային աշխատանք, որի շրջանակում աշակերտները սովորեցին պատրաստել թեմատիկ դասեր «Աշխարհացույց» հարթակի միջոցով և ներկայացնել դրանք այլ դասարանների սովորողներին: Այս գործընթացը միաժամանակ զարգացրեց նրանց հետազոտական հմտությունները, տեղեկատվության ընտրության և վերլուծության կարողությունները, հանրային խոսքի մշակույթը և թիմային համագործակցության փորձը: Թվային գործիքների կիրառումը էապես փոխեց դասավանդման դինամիկան. դասը դարձավ ինտերակտիվ, տեսանելի և բազմաշերտ: Աշակերտները հնարավորություն ստացան աշխատել քարտեզների, վիզուալ տվյալների և ստեղծագործական ներկայացումների հետ, համադրել արվեստը, պատմությունը և աշխարհագրական մտածողությունը: Արդյունքում ձևավորվեց միջառարկայական մոտեցում, որը նպաստեց սովորողների քննադատական մտածողության և ինքնուրույն աշխատանքի զարգացմանը:

Ծրագրին մասնակցության և դպրոցում իրականացված նախագծային գործունեության արդյունքներով ինձ շնորհվեց «Հետազոտող ուսուցիչ» հավաստագիր, որը ոչ միայն մասնագիտական գնահատական էր, այլև պատասխանատվություն՝ շարունակելու նորարարական մանկավարժության ճանապարհը: Այս փորձառությունը ևս մեկ անգամ հաստատեց, որ ժամանակակից ուսուցիչը պետք է լինի շարունակաբար սովորող, փորձարարող և վերաիմաստավորող մասնագետ:

Ծրագրի շրջանակում ձեռք բերված փորձը և մեթոդական գործիքակազմը կիրառելով՝ ես նախաձեռնել եմ նաև երաժշտություն առարկայի համար ուսումնամեթոդական նյութերի մշակում և հոդվածագրություն: Այս աշխատանքների նպատակն է ստեղծել կիրառելի, ժամանակակից և թվային միջավայրին հարմարեցված նյութեր, որոնք կարող են օգտագործվել ինչպես իմ դպրոցի, այնպես էլ այլ դպրոցների երաժշտության ուսուցիչների և սովորողների կողմից: Նյութերը կառուցվում են հետազոտական և միջառարկայական մոտեցմամբ՝ համադրելով երաժշտագիտությունը, արվեստի պատմությունը և թվային գործիքների կիրառությունը:

Մարիեպա ԱԴԱՄՅԱՆ
Երևանի № 181 հիմնական դպրոց

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

«Գիրքը մեզ սովորեցնում է այլ աչքերով տեսնել աշխարհը...».

Հասմիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ Մշակույթի վաստակավոր գործիչ

-Տիկին Կարապետյան, Դուք ավարտել եք Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի գրադարանային բաժինը: Կասեք՝ ինչով էր պայմանավորված Ձեր մասնագիտական ընտրությունը:

-Ծնվել եմ մանկավարժների ընտանիքում և առաջին գիտակցական հիշողությունը եղել է մեր տան մեծ գրադարանը, որին մեր ընտանիքի բոլոր անդամները վերաբերվում էին ակնածանքով և հոգատարությամբ: Ամեն երեկո մեր ջերմությամբ լի տանը, գործերից ազատ ժամերին, ես տեսնում էի ծնողներիս, ավագ եղբայրներիս որևէ գիրք ընթերցելիս, որն ավարտելուց հետո անպայման կիսում էին իրենց տպավորությունները, և երեկոները վերածվում էին գրքերի քննարկումների ու բանավեճերի: «Նախանձով» հետևում էի ավագներիս և 5 տարեկանում արդեն գիտեի գրել–կարդալ: Այսպես սկսվեց գրքի հետ իմ ամենակայացած բարեկամությունը, երբ օրս՝ դասերից ազատ պահերին, սկսվում և ավարտվում էր որևէ նոր գրքով: Գրքի ու գրականության նկատմամբ գիտակցված նախասիրությունս, դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո, ինձ բերեց մանկավարժական համալսարանի գրադարանային բաժին, որն ավարտելուց հետո սկսվեց իմ մասնագիտական ուղին և շարունակվում է մինչև օրս՝ արդեն 44 տարի:

-Երկար տարիներ Դուք ղեկավարել եք Ավ. Իսահակյանի անվան գրադարանը. Ձեր աշխատանքային ուղին ուղին եղել է վերելքների ու գրադարանը մշակութային կենտրոն դարձնելու փառավոր ժամանակաշրջան: Ի՞նչ ճանաչված մարդկանց հետ հանդիպումների տպավորություններով են լեցուն գրադարանի պատմության էջերը...

-Այո, 30 տարի ինձ բախտ է վիճակվել ղեկավարել Հայաստանի Հանրապետության երկրորդ մեծ /Ազգային գրադարանից հետո/ և Երևանի առաջին հանրային գրադարանը, որը բացվել էր 1935 թվականին, իսկ 1955-ին՝ Վարպետի օրհնությամբ, անվանակոչվել Ավետիք Իսահակյանի անվամբ: Անկեղծ ասած, ներքին մեծ ապրումներով, անհանգստությամբ և զգուշավորությամբ եմ ոտք դրել Երևանում արդեն հայտնի մշակութային այդ օջախը. արդյոք կկարողանամ, արդյոք աշխատանքային նոր մոտեցումներս կընկալվե՞ն գրադարանի աշխատակազմի և ընթերցողների կողմից, արդյոք կհաջողվի՞ ինձ բարձր պահել գրադարանի արդեն ձևավորված և ծանրակշիռ հեղինակությունը Հայաստանի գրադարանային-մշակութային դաշտում... Բայց աշխատակազմի բարձր մասնագիտական հմտությունների, իմ ուժերի նկատմամբ նրանց և ընթերցողների վստահության ու բարյացակամ վերաբերմունքի միջավայրում ձևավորվեց նոր ժամանակների պահանջներին համաքայլ ապրող մի նոր մշակութային կենտրոն, որն այսօր սիրելի և գեղագիտական ժամանցի վայր է դարձել տասնյակ հազարավոր ընթերցողների համար՝ իր մշտապես համալրվող եզակի գրքային հավաքածուներով, ժամանակակից տեղեկատվական տեխնիկայով, թվային բազաներով, էլեկտրոնային սպասարկումով, գրադարանային գործառույթների ավտոմատացմամբ, հետաքրքիր մարդկանց հետ հանդիպումներով, նոր գրքերի շնորհանդեսներով, տարբեր թեմատիկ ցուցահանդեսներով, դասընթացներով և այլն...

Բայց ամենակարևորը. այստեղ ընթերցողներին սպասում և սպասարկում են մեծ սիրով ու առանձնահատուկ հոգատարությամբ ...

Գրադարանի առօրյան շատ հետաքրքիր է՝ և իր ծառայությունների բազմազանությամբ, և շատ անվանի մարդկանց ամենօրյա ներկայությամբ... չեմ ուզում առանձնացնել մեր երկրի ճանաչված մարդկանց անունները. նրանք մեր գրադարանի

երեկվա,այսօրվա և վաղվա հավատարիմ և սիրված այցելուներն են, որոնց շնորհիվ նաև ամեն օր հարստանում է մեր գրքային հավաքածուն: Նրանց հետ հանդիպումների, դասախոսությունների, զրույցների և հետաքրքիր դիպվածների մասին կարող ենք օրեր շարունակ խոսել, և նրանցից շատերն իրենց կարծիքը մեր գրադարանի մասին մշտապես հայտնում են տարբեր լրատվական աղբյուրներում:

-Գրադարանների թվայնացված գործընթացների համատեքստում ի՞նչ դեր ունեն այսօր գիրքն ու ընթերցանությունը...

-Մեր օրերում գրադարանում առաջնային կարևորություն ունի տեղեկատվության կուտակման, դասակարգման և մատուցման ծառայության ճիշտ կազմակերպումը, ընթերցողների հետ հաղորդակցության գրված և չգրված կանոններին հետևելը: Գրադարաններն իրենց հաճախորդների (ընթերցող-օգտվող-այցելու) հետ պետք է կիրառեն ժամանակակից հաղորդակցության, արագ և արժանահավատ տեղեկատվության տրամադրման բոլոր ձևերն ու մեթոդները: Թվայնացումն ու գործընթացների ավտոմատացումն այսօր այդ ձևերից մեկն են՝ դասական գրքին զուգահեռ: Իսահակյան գրադարանում այցելուին գրադարանին մոտ պահելու համար կիրառվում են բոլոր ժամանակակից ձևերն ու մեթոդները: Դա է ապացուցում մեր գրադարանի առօրյան՝ իր բազմահազար ընթերցողներով...

-Ո՞րն է 21-րդ դարի գրադարանների առաքելությունը. արդյո՞ք մերօրյա մարտահրավերները չեն սպառնում գրքին ու նրա հետ շփվելու հաճույքին:

-Այս հարցի մասին արդեն ասել եմ, հավելեմ նաև, որ տեղեկատվության՝ որպես ամենաթանկ ապրանքի տիրապետությունը մեր ներկա իրականության մեջ կարևոր է, որ գրադարանն ունենա ոչ միայն դասական ներկայություն, այլ նաև օգտագործի սոցիալական հաղորդակցության բոլոր միջոցները (ֆեյսբուք, ինստագրամ, տելեգրամ, յութուբ և այլն)՝ ընթերցողների հետ ամենօրյա կապը պահպանելու և տեղեկատվությունը տարածելու համար: Մեր գրադարանում օգտագործվում են նաև այդ հարթակները՝ ընթերցողներին հնարավորություն ընձեռելով նաև անվճար մուտք գործելու գրադարանի թվային շտեմարանները (Ոսկե շղթա 1-2-3-4-5):

Հայտնի ճշմարտություն է. գրադարանի լավագույն բարեկամը նրա ծառայություններից գոհ քաղաքացին է: Գրադարանային ծառայությունները պետք է հավուր պատշաճի կազմակերպված, լավ մտածված և հուսալի լինեն, իսկ ներքին պլանավորումը որքան հնարավոր է՝ հարմար և հրապուրիչ ...

-Ո՞րն է Ձեր ամենասիրելի գիրքը:

- Սիրելի գրքեր շատ ունեմ, որոնցից յուրաքանչյուրն ինձ հստակ գիտելիքներ, կյանքի փորձ, պատմական անշրջելի հիշողություն, ստեղծագործական միտք, երազելու հմայք և գեղագիտական հաճույք են պարգևել... Այսօր էլ շարունակվում է այդ հեքիաթը, քանի որ ամեն օր նորանոր գրքեր են ծնվում, որոնք անպայման պիտի կարդանք: Ինձ միշտ հարց են տալիս և խորհուրդ հարցնում լավ գրքերի առումով. ես միշտ ունեմ իմ պատասխանը՝ լավ գրքեր գտնելու համար յուրաքանչյուրը պիտի կարդա հազարավոր գրքեր և գտնի իր սիրելի ու նախընտրելի գրքերը... այնպես որ մեր ընտրությամբ է պայմանավորված մեր անհատականության ձևավորումը...

-Ինչպե՞ս եք պատրաստվում Գիրք նվիրելու օրվան:

-Այսօր երևի քչերը գիտեն, որ «Գիրք նվիրելու օր» սահմանելու առաջարկությունը ծնվել է Հայաստանի գրողների միության այդ ժամանակների նախագահ, երջանկահիշատակ Լևոն Անանյանի և մեր գրադարանի նախաձեռնությամբ: Մենք միասին ասուլիս հրավիրեցինք և հայտարարեցինք այդ մասին: Եվ շատ ուրախ եմ, որ այն ընկալվեց և սիրվեց շատ արագ՝ դառնալով պետական տոն ...

Ես անձամբ իմ ընկերներին ու բարեկամներին գրքեր կնվիրեմ, իսկ գրադարանի տոնական ծրագրերին կարող եք ծանոթանալ այցելելով գրադարանի կողմից օգտագործվող սոցիալական հարթակներ... սիրով կսպասենք ...

-Գրադարանային գործընկերներին և Մանկավարժական համալսարանի գրադարանային բաժնում սովորել ցանկացողներին ի՞նչ կմաղթեիք:

-Վերջերս մի հետաքրքիր մտքի հանդիպեցի. եթե բժիշկ լինեի, գրքեր կհանձնարարեի որպես դեղ: Նրանք նույնքան զորավոր են, որքան դեղերը:

Այս միտքը բացահայտում է պարզ, բայց խոր ճշմարտություն. մարդու հոգին ու միտքը նույնքան բուժման կարիք ունեն, որքան մարմինը: Գիրքը գուցե և չի սպիացնում վերքը, բայց կարող է մեղմացնել հոգեկան տառապանքը, զարգացնել քննական միտքը, հարցադրումների և իմաստի փնտրտուքի մեջ հայտնաբերել ճշմարտությունը: Գրքերը լուռ բժիշկներ են. բուժում են առանց հարցերի, մխիթարում են առանց միջամտելու, բացում են փակ դռներն ու պեղում մութ ծալքերը: Գիրքը մեզ սովորեցնում է այլ աչքերով տեսնել աշխարհը՝ նրա խնդիրները, հույզերը, լույսերը և դրա միջոցով ճանաչել ինքներս մեզ...

...Մի քիչ բարձրագոչ կարող է հնչել, բայց ես այդպես եմ զգում, և այն մարդիկ, որոնք կոչված են կրթելու գրադարանային մասնագետների, և նրանք, ովքեր ընտրելու են այդ մասնագիտությունը, պիտի ունենան այդ զգացողությունը...

Զրույցը Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Մանկությունս ու գրքերի աշխարհը

Բոլոր ճանապարհները տանում են դեպի... մանկություն: Գնանք հետ՝ երևակայելով, թե ժամանակի մեքենա ունենք: Ես այն բախտավոր երեխան եմ, որին իր մայրիկը շռայլորեն նվիրում է գրքեր: Արդեն գիտեմ Գրքի օրվա խորհուրդը, արժեքը: Գրախանութում եմ: Մի անգամ Թումանյանի հեքիաթներն ենք վերցնում, հաջորդ այցին տուն ենք բերում անդերսենյան աշխարհի հրաշքը: Մի քիչ մեծացա: Արդեն շատ մեծ ու իմաստուն եմ: Գրիմ եղբայրներ եմ կարդում: Եվ այսպես շարունակ: Չորրորդ դասարանում եմ սովորում: Սիրելի Թումանյանի անգերազանցելի մշակումն ենք անցնում: Մեր Դավթին՝ խենթ ու խելառ հովիվ «հսկային» արդեն շատ եմ սիրում: Ես ընտանի ու վայրի կենդանիներին ճանաչում եմ: Ուրախ եմ ու հպարտ: Հիշում եք, չէ՞, որ պատկերացրել էինք՝ ժամանակի մեքենայով մանկություն ենք գնացել: Ես կարողանում եմ լավ պատկերացնել: Փորձառությունն ունեցել եմ: Դեռ չորրորդ դասարանում եմ սովորում: Մայրենիի ուսուցչուհին հանձնարարել էր գրել շարադրություն: Պիտի ներկայացնեինք, թե ժամանակի մեքենայով ո՞ւր կգնայինք, ինչո՞ւ: Բոլոր երեխաները հանդես եկան կարգին, մեր տարիքին համապատասխան շարադրություններով: Գուշակեք՝ ինչ էի ընտրել: «Փարիզի Աստվածամոր տաճար»: Չէ, չէի կարդացել վեպը: Մուլտֆիլմն էի դիտել, հետո՝ մյուզիքլին էի ծանոթ: Մայրիկս ու տատիկս էլ պատմել էին վեպի բովանդակությունը: Դա իմ ամենասիրելի ու տխուր պատմությունն էր: Կարդում եմ, որ կցանկանայի հայտնվել Փարիզում. այդ դեպքում հնար կգտնեի ու կփրկեի Էսմերալդային: Ուսուցչուհին զարմացել է: Մտածում է՝ տան մեծերն են գրել ու տվել ձեռքս: Հարցնում է՝ ինչո՞ւ էին ուզում մահապատժի ենթարկել աղջկան: Ես խորամանկ երեխա եմ: Խորամանկ եմ, բայց ամաչկոտ: Գիտեմ պատմությունը: Տեղյակ եմ Ֆրոլոյի քայլերի իրական պատճառներին: Ամաչեցի: Կմտածեն՝ մեծացած-փոքրացած եմ: Ասում եմ, թե Էսմերալդային կախարդ էին համարում: Գոհ է պատասխանից: Ես ավելի գոհ եմ, որ մանրամասներ չպատմեցի: Մեծ եմ ավելի՝ 8-րդ դասարանցի: Կարդացել եմ վեպը, բարկացել, հիացել, արտասվել: Հետո նայել եմ բոլո՛ր ֆիլմերը: Սա մնացել է իմ հոգուն դիպած պատմությունը: 8-րդ դասարանում երբ Իսահակյանի «Հավերժական սեր»-ն ենք անցնում, կարդում եմ.

Բայց Էլ-Սաման կմախքային ձեռներով
Պիրկ գրկել է նորից հյուծված բամբիշին:

... Ես հիշում եմ սիրելի վեպիս ավարտը՝ Քվազիմոդոյի ու Էսմերալդայի ոսկորները՝ իրար գրկած, անբաժան: Չէ, 4-րդ դասարան չեմ: Չորս տարիներն էլ վաղուց անցան. 8-րդ էլ չեմ: Չորրորդ կուրսի ուսանող եմ: Անցել եմ Հյուգո, Թումանյան, Իսահակյան... Հիշում եմ սիրելի՛, սիրելի՛ Հյուգոյի միտքը. «Գրքերն ապահով ու սառը բարեկամներ են»: Բարի է Գրքի օրը: Գնահատենք մեր անդավաճան «բարեկամներին»:

Սուսաննա ՉԱՐՉՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս

Գիրքը՝ մարդկային մտքի անշեջ լույսը

Ընթերցանությունը իմ հոգու անդադար աղոթքն է՝ ասված լռությամբ: Ամեն անգամ, երբ գիրք եմ բացում, թվում է՝ ժամանակը խոնարհվում է, իսկ բառերը դառնում են կամուրջ՝ իմ և հավերժության միջև: Գիրքը ինձ համար լույս է, որ վառվում է մթության մեջ: Նրա տառերից հոսում է իմաստություն, որ սնում է միտքս և մաքրում հոգիս: Ընթերցանության շնորհիվ ես սովորել եմ զգալ ուրիշի ցավը՝ որպես իմը, և ուրիշի ուրախությունը՝ որպես հաղթանակ: Գրքի տոնը ինձ համար սրբազան օր է: Այդ օրը գիրքը բարձրանում է առօրյայից վեր և կանգնում մեր հոգիների կենտրոնում՝ որպես հիշեցում, որ մարդը մեծ է այնքան, որքան մեծ են նրա կարդացած մտքերը: Այդ օրը քաղաքները շնչում են բառերով, մարդիկ հանդիպում են ոչ միայն միմյանց, այլ նաև իրենց ներքին աշխարհին: Գրքի տոնը ինձ համար հավատքի վերանորոգում է՝ դեպի միտքը, խոսքը և ստեղծարար ոգին: Ընթերցանության մեջ ես ճանաչում եմ ինքս ինձ՝ ինչպես խոր լռության մեջ ճանաչում են ճշմարտությունը: Գրքի տոնը յուրահատուկ օր է, որը մեզ հիշեցնում է գրքի անփոխարինելի դերի մասին մարդկային ողջ կյանքի ընթացքում: Դարեր շարունակ գիրքը եղել է գիտելիքի, իմաստության և հոգևոր արժեքների պահպանման ու փոխանցման ամենահուսալի միջոցը: Այն լուռ, բայց հզոր զրուցակից է, որը յուրաքանչյուր ընթերցողի հետ խոսում է յուրովի՝ բացահայտելով նոր մտքեր, զգացմունքներ և աշխարհներ: Այն ձևավորում է մարդու մտածողությունը, հարստացնում լեզուն և զարգացնում երևակայությունը: Գրական հերոսների հետ ապրելով՝ մենք դառնում ենք ավելի զգայուն, ավելի խոհեմ և ավելի մարդկային: Հատկապես մեր արագընթաց ու տեխնոլոգիապես հագեցած ժամանակներում գիրքը օգնում է կանգ առնել, խորանալ և լսել սեփական ներաշխարհի ձայնը, այն հզոր հենարան է յուրաքանչյուրիս կյանքում:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս



Գիրքը մարդու ուղեկիցն է

Գիրքը ուրույն արարում է, մարդու շուրջը պտտվող մոլորակ, իսկ նրա ուղեծիրը՝ հավերժության հին ու նոր մի արահետ: Գրքի ամեն էջում դրոշմված են մարդն ու նրա ողջ կյանքը, ինքնությունն ու էությունը, անցյալը, ներկան ու ապագան: Այն գրողի և ընթերցողի միջև կամուրջ է, որով բոլորս ենք անցնում: Շատերի անունը գրված է, շատերն էլ անանուն են, բայց ապրում են գրողների կերտած աշխարհների լայն ու նեղ փողոցներում, ինչը ոմանց չի բավարարում. մենք Հերոստրատին հիշում ենք, բայց արժանիների անուններ կան, որոնք բացառիկ խիզախության, ազնիվ հոգու, անհուն իմաստության վկայություններ են: Ընթերցանությունն էլ ճամփորդություն է և օգնում է ձեռք բերել այնպիսի ճանաչողություն, որի մասին կարելի է միայն երազել, որի ձեռքբերման համար մի քանի կյանքն անգամ քիչ կարող է լինել: Հավատարիմ ընկեր է գիրքը: Լուռ է, բայց միտքդ նրանով է կենդանի, խոսքդ էլ նրանով է հզոր: Այն մեր լավագույն ուղեկիցն է, որը պատրաստ է առաջնորդել ընթերցողին իր հարատև ու ճշմարիտ ճանապարհով:

Անի ՊԱՊԻԿՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս

Միավորվեցին հավատը, ազգային ավանդույթն ու սերունդների կապը

Տյառնընդառաջ նշանակում է «ելնել Տիրոջն ընդառաջ», տարածված է նաև Տերընդեզ, Տըրընդեզ, Տըրընտես, որոնք ծագել են «Տերն ընդ ձեզ» անվանումից: Հայոց Եկեղեցու կանոնի համաձայն՝ տոնի նախօրեին՝ երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է նախատոնակ: Այն ավետում է Տերունի տոնի սկիզբը: Սովորաբար նախատոնակի արարողության ավարտին կատարվում է Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվում են աշխարհի 4 ծագերը: Անդաստանին հաջորդում է մոմերի օրհնության արարողությունը: Եկեղեցուց վերցրած կրակով եկեղեցիների բակերում վառվում են խարույներ՝ իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Փետրվարի 13-ին Մանկավարժական համալսարանի №57 հիմնական դպրոցի բակում նշեցին Տյառնընդառաջի տոնը, որը հիշեցնում է Տիրոջ ընծայումը տաճարին և Աստծո լույսի հայտնությունը աշխարհին:

Ուրախ երգ ու պար, խրոխտ երաժշտություն, շուրջպար.կրակի լույսի շուրջ միավորվեցին հավատը, ազգային ավանդույթն ու սերունդների կապը...

Օրը լուսավոր էր և լուսառատ. թող Տյառնընդառաջի լույսը ուղեկից լինի համալսարանական դպրոցի աշակերտների՝ գիտելիքի, բարության ու խաղաղության ճանապարհին...

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՄԱՆԱԼ

ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՅԱ ՁԵՌԱԳԻՐԸ

Հայկական ձեռագրական մշակույթի բացառիկ արժեքներից է Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2679 ձեռագիրը: Այն ընդօրինակվել է 981 թվականին Ղուկաս գրիչի ձեռքով՝ իր հոր՝ Դավիթ քահանայի պատվերով: Թեև մատյանը արտաքին տեսքով առանձնապես չի տպավորում, սակայն այն բացառիկ նշանակություն ունի իր գրանյութով և բովանդակությամբ: Սա հայերեն առաջին թղթյա ձեռագիրն է և աշխարհի ամենահին թղթյա ձեռագրերից մեկը: Մատյանը նաև հայերեն առաջին բոլորգրով գրված ձեռագիրն է, մեզ հասած առաջին ինքնագիր մատյանը և աշխարհիկ բովանդակությամբ առաջին ժողովածուն:

Մինչև XIX դարի սկզբները ձեռագիրը պահվել է Բաղեշի վանքերից մեկում, ապա տեղափոխվել Կարին, հետագայում՝ Ախալցխա: 1869 թվականին այն բերվեց Էջմիածին և ընդգրկվեց Գևորգ IV կաթողիկոսի ջանքերով կազմված «Գևորգյան» հավաքածուում: 1881 թվականին ձեռագիրը մուտք գործեց Էջմիածնի մատենադարան՝ դառնալով հայ մշակույթի անփոխարինելի մաս: Այդ ժամանակ մատյանն արդեն շուրջ 900 տարվա պատմություն ուներ:

Ձեռագրի բացառիկությունը պայմանավորված է նախևառաջ նրա գրանյութով: Մատյանը գրված է թղթի վրա, որը միջնադարում կոչվում էր «աղքատ քարտէս»: Այս բնորոշումն առաջացել էր մագաղաթի հետ համեմատությունից. կենդանու կաշվից պատրաստված մագաղաթը համարվում էր ամուր, թանկարժեք և պատվավոր գրանյութ, մինչդեռ թուղթը մատչելի էր, արագ պատրաստվող և մասսայական: Այդ պատճառով այն ընկալվում էր որպես «աղքատ» տարբերակ, սակայն հենց թուղթը դարձավ գիտության և գրականության տարածման ամենակարևոր միջոցը:

Թղթի պատմությունը սկիզբ է առնում Չինաստանում. ավանդության համաձայն, առաջին թուղթը պատրաստվել է 101 թվականին Ցայ-Լունի կողմից: Հետագա դարերում այս նորարարությունը տարածվեց Արևելքից դեպի Միջին Ասիա և ապա՝ արաբական աշխարհ: VIII դարում արաբները յուրացրին թղթի պատրաստման արհեստը, կատարելագործեցին տեխնիկան և դարձան դրա հիմնական արտադրողներն ու տարածողները: Արաբական խոշոր կենտրոններից Բաղդադը և Դամասկոսը դարձան թղթի արտադրության կարևոր օջախներ:

Հնագույն թղթյա ձեռագրերից հայտնի են արաբերեն (866 թ.), Կահիրեի (878 թ.), Օքսֆորդի համալսարանի (974 թ.), Լայպցիգի համալսարանի (990 թ.) ձեռագրերը: Հայկական ձեռագիրն այս շարքում համարվում է չորրորդ հնագույն թղթյա մատյանը:

Ենթադրվում է, որ մատյանը ընդօրինակվել է Անիի մերձակայքում գտնվող Արգինայում, իսկ նրա թուղթն ու թանաքը պատրաստվել են հենց Անիում: Թղթի կառուցվածքը վկայում է, որ այն պատրաստվել է կտավատի ցողունից: Որոշ թերթերում պահպանվել են ցողունի անմշակ մանրաթելեր, իսկ թանաքի և թղթի անհամապատասխանության պատճառով առաջացել են թանաքակեր հատվածներ: Սա ցույց է տալիս, որ արտադրությունը դեռևս գտնվում էր ձևավորման փուլում, սակայն հենց այդ փորձարարական քայլերը դարձան հայ մշակույթի կարևոր ձեռքբերում:

Անին, որը միջնադարում հայտնի էր ոչ միայն իր քաղաքական ու տնտեսական նշանակությամբ, այլև արվեստներով ու արհեստներով, աստիճանաբար վերածվեց տարածաշրջանի մշակութային կենտրոնի: Քաղաքի ձիթհանքերը, կտավագործությունն ու վուշագործությունն ապահովում էին անհրաժեշտ հումքը, իսկ բազմազան արհեստների զարգացումը նպաստեց նաև թղթագործության առաջացմանը: Թեև առաջին փորձերը դեռևս անկատար էին, Անին և նրա մերձակա բնակավայրերը, այդ թվում Արգինան, հայտնի դարձան նաև թղթի արտադրությամբ, ինչը վկայում է, որ 10-րդ դարում հայ արհեստավորները արդեն փորձում էին յուրացնել և զարգացնել նոր գրանյութի պատրաստման գաղտնիքները:

Թղթյա հնագույն ձեռագրի գիրը միջին և մանր բոլորգիրն է: Սկզբնական շրջանում բոլորգիրը համարվում էր «անհեթեթ» գիր, քանի որ նրա գծերը համեմատաբար պարզեցված ու «կոպիտ» էին՝ ի տարբերություն ավանդական, խիստ կանոնակարգված երկաթագրի: Սակայն բոլորգիրը ստեղծվել էր առօրյա, արագ գրության համար և հենց այդ գործնական նպատակն էլ ապահովեց նրա լայն տարածումը: Ժամանակի ընթացքում բոլորգիրը դարձավ ոչ միայն ամենատարածված, այլև պաշտոնական գրատեսակը: Այն կիրառվեց վարչական և եկեղեցական գրություններում, իսկ տպագրության մեջ հաստատվեց որպես հիմնական գիր:

Հնագույն թղթյա ձեռագիրն ունի 360 թերթ, 19,5×28,5 սմ մեծություն: Այն գրված է միասյուն ձևաչափով և ունի շագանակագույն կաշվե կազմ: Ժամանակի ընթացքում մատյանը մի քանի անգամ վերակազմվել է, իսկ ներկայիս կազմը թվագրվում է 1585 թվականով: Թեև մատյանը մեզ է հասել թափված թերթերով, սակայն պահպանվել է հիմնական կառուցվածքը: Մատյանը բաղկացած է երկու ինքնուրույն ժողովածուներից, որոնք հետագայում միավորվել են մեկ մատյանի մեջ: Առաջինը ներառում է գիտական ու պատմական նյութեր, երկրորդը՝ դավանաբանական երկեր, որոնք ուղղված են քաղկեդոնականության դեմ պայքարին:

Բովանդակությունը բազմաշերտ է. այն ներառում է աստվածաբանական, պատմական, տոմարագիտական, տիեզերագիտական, փիլիսոփայական և չափագիտական նյութեր: Մատյանը պահպանել է ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակների գործեր: Հայ հեղինակներից հիշատակվում են Գրիգոր Պարթևը, Եղիշեն, Մովսես Խորենացին, Հովհան Մանդակունին, Անանիա Շիրակացին, Հովհան Օձնեցին, Ստեփանոս Սյունեցին և ուրիշներ: Օտար հեղինակներից՝ Աթանաս Աղեքսանդրացի, Կյուրեղ Աղեքսանդրացի, Հովհան Ոսկեբերան, Արիստիդես Աթենացի, Արիստոտել:

Այս բազմաշերտ բովանդակությունը ձեռագրին հաղորդում է ոչ միայն գիտական արժեք, այլև մշակութային եզակիություն: Այն փաստում է, որ 10-րդ դարում հայ մտավոր կյանքը ընդգրկում էր աստվածաբանության, փիլիսոփայության, տիեզերագիտության և պատմագրության լայն ոլորտներ:

Հաշվի առնելով մատյանի պատկառելի տարիքը, գրանյութը և աշխարհիկ ու կրոնական նյութերի բազմազանությունը՝ հետազոտողները այն բնութագրել են որպես «նշանավոր և ամենաթանկագին հնություն»: Հայերեն հնագույն թղթյա ձեռագիրը հայ մշակույթի պատմության մեջ եզակի երևույթ է: Այն ոչ միայն առաջին թղթյա ձեռագիրն է հայերենով, այլև համաշխարհային մասշտաբով ամենահին ձեռագրերից մեկը:

Այս ձեռագիրը, լինելով հազարամյա հուշարձան, շարունակում է մնալ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում և արժանի է, որ նրա պատմությունը ներկայացվի ոչ միայն գիտական շրջանակներում, այլև լայն հասարակությանը:

Թամարա ՄԻՆԱՍՅԱՆ
բգթ, Մատենադարանի ավագ գիտաշխատող

Ի՞նչ կասեի ինձ՝ առաջին կուրսեցուն

Եթե հնարավոր լիներ ժամանակի սլաքը հետ տալ ու հայտնվել այն նույն սեպտեմբերյան առավոտվա խառնաշփոթի մեջ, երբ առաջին անգամ՝ մի քիչ երկչոտ ու անվստահ քայլերով, մտա համալսարանի նախասրահ, ես հաստատ չէի շտապի լսարան: Ես կկանգնեցնեի այդ երիտասարդին, որի աչքերում մեծ սպասումներն ու թեթև տագնապը խառնվել էին իրար, կժպտայի ու կասեի՝ «Շնչի՛ր, առջևումդ քո կյանքի ամենաաղմկոտ ու լուսավոր ռեպորտաժն է»:

Այսօր, երբ ուսանողական տոմսս արդեն վերածվել է երկու դիպլոմի, իսկ լսարանական քննարկումները՝ մասնագիտական փորձի, ես հասկանում եմ, որ համալսարանը ոչ թե պարզապես կրթօջախ էր, այլ մի հսկայական խմբագրություն, որտեղ ես սովորեցի գրել իմ սեփական կյանքի պատմությունը:

Առաջին բանը, որ կհուշեի ինձ՝ առաջին կուրսեցուն, «սպիտակ էջից» չվախենալն է: Լրագրությունը, ինչպես և ուսանողական կյանքը, սխալվելու, սրբագրելու ու նորից սկսելու արվեստ է: Ես ինձ կասեի՝ մի՛ ամաչիր հիմար հարցեր տալուց, որովհետև լավագույն պատմությունները հաճախ թաքնված են հենց այն հարցերի հետևում, որոնք մենք վարանում ենք բարձրաձայնել: Ես կհորդորեի ինձ՝ դառնալ իրադարձությունների կենտրոնը, որովհետև լրագրողի համար չկա ավելի վատ բան, քան կողքից նայելը, երբ կարելի է լինել գործողության մեջ:

Հենց այդ ցանկությունն էր, որ ինձ տարավ Ուսանողական խորհուրդ: Հետադարձ հայացք գցելով՝ ես հասկանում եմ, որ այնտեղ անցկացրած պահերը, կազմակերպված միջոցառումներն ու ծրագրերը ոչ պակաս կարևոր էին, քան տեսական դասախոսությունները: Ես ինձ կասեի՝ մի՛ խնայիր էներգիադ այդ աղմկոտ միջանցքներում, որովհետև հենց այնտեղ ես սովորելու մարդկանց լսել, նրանց առաջնորդել ու, որ ամենակարևորն է, թիմ լինել: Ուսանողական խորհուրդն ինձ համար դարձավ այն հարթակը, որտեղ ես հասկացա՝ լրագրողը ոչ միայն տեղեկացնող է, այլև փոփոխություն ստեղծող:

Բակալավրիատից մինչև մագիստրատուրա անցած ճանապարհը նման էր մի երկարատև հետաքննության, որտեղ ես փնտրում էի իմ ձեռագիրը: Ես ինձ կհուշեի՝ ավելի շատ կարդա տողերի արանքում: Դասախոսները մեզ տալիս են գիտելիքի բանալիները, բայց դռները պետք է բացես ինքդ՝ քո հետաքրքրասիրությամբ ու համառությամբ: Ես կխնդրեի ինձ չսահմանափակվել միայն լսարանով, որովհետև համալսարանի իրական շունչը զգացվում է այն ժամանակ, երբ դու կապեր ես հաստատում, երբ քո կուրսընկերը դառնում է քո գործընկերը, իսկ ընդմիջմանը խմած սուրճը վերածվում է նոր նախագծի քննարկման:

Եվ, վերջապես, ես ինձ կասեի՝ վայելի՛ր ամեն մի «դեղլայն»: Թող քննաշրջանները չթվան աշխարհի վերջը, այլ լինեն քո մասնագիտական դիմացկունության ստուգումը:

Այսօր, երբ ես արդեն ավարտել եմ այս փուլը, մի քիչ կարոտով եմ նայում այն երիտասարդին, որը դեռ չգիտեր, թե որքան հարուստ է հեռանալու այս դռնից: Իմ պատգամը պարզ կլիներ. «Եղի՛ր համարձակ, եղի՛ր անհանգիստ ու հիշի՛ր, որ քո դիպլոմը ոչ թե ավարտ է, այլ մի մեծ պատմության նախաբան, որը դեռ նոր պիտի հանձնես ընթերցողիդ դատին»:

Բարի՛ մուտք համալսարանական աշխարհ, որտեղ ամեն օրը մի նոր էջ է, ու միայն քեզնից է կախված, թե որքան հետաքրքիր կլինի քո գրած պատմությունը: Գրի՛ր այնպես, որ տարիներ անց հպարտությամբ ընթերցես:

Ժենյա ԱԲԳԱՐՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի շրջանավարտ

Բաց լուսամուտ

Լուսամուտը բաց էր: Մեղմ քայլերով մոտեցավ դրան ու քարացած կանգնեց: Աչքերով անցորդներին էր ճանապարհում, ոմանց բարևում, ոմանց անտեսում, ոմանց միտումնավոր արհամարհում, ոմանց էլ քննադատում ու անիծում…

Սրտում ինչ-որ խղճահարություն էր արթնացել, որն էլ անհանգստություն էր պատճառում հոգուն: Երկար կանգնած մնաց նույն տեղում և այդ ընթացքում մտածեց գրեթե ամենի մասին: Մտածեց, խորացավ ու գրի առավ, որ մարդը հարաբերական է, ինչու՞: Կյանքը հարաբերական է, մահը՝ նույնպես, իսկ սրանց իշխողը շատ դեպքերում հարաբերական մարդիկ են, որոնք էլ պայքարում եմ կյանքով ընդդեմ մահի, մահին ընդդեմ կյանքով, և, ի վերջո, մահն ու կյանքն էլ միահյուսվում են ու պայքարում քո դեմ, քո դիմաց: Նաև դու ես պայքարում ինքդ քո դեմ, երբեմն ուժասպառ ծնկի ես գալիս ինքդ քո առաջ, բայց չես ընկնում, հազիվհազ պաշտպանում ես քեզ, քո անվերջ հարվածներից ու վերջապես ընկնում, այնուամենայնիվ բարձրանում ես:

Հաճախակի կրկնվող երևույթ է, նույնիսկ արդիական, երբ սեփական «ես»-դ ոչնչով չի տարբերվում գերեզմանատան կենդանի մեռելներից: Եկավ Ալբերտի սիրած ժամանակահատվածը՝ գիշերը, աներևակայելի հմայքով պարուրված կախարդ է, որը մտքերդ վերածում է աղբակույտի կամ տերևաթափի: Միակ ժամանակահատվածն է, երբ ընդունում, հաշտվում, ներում ու ընդունում ես իրականությանը, միաժամանակ երևակայելով հակահիրականություն, ու այս ամենը այստեղ՝ հակահիրականության մեջ: Ու վերջապես լռում է նորից ամեն ինչ, բայց չգիտես լռությանը ստիպել են, որ լռի, թե՞ ինքնակամ հանձնվել է ժամանակին ու ոչնչի դեմ պայքարելու իմաստ չի գտնում:

Իրապես ինչի՞ դեմ պայքարի՝ աղմուկի՞, ախր լռությունն էլ է քաջ գիտակցում, որ աղմուկի դեմ պայքարելն անզոր է, լռությունը գիտի, որ աղմուկին հաղթում է կրկնակի աղմուկը, իսկ լռությանը հաղթել՝ չի նշանակում աղմկել, գոռալ, ճչալ, այլ կարող ես միայն քնել: Վերջնական կհաղթես այն ժամանակ, երբ քունդ կլինի խորը ու հավետ, երբ կջնջվես աշխարհի երեսից, և միայն տապանաքարդ կմնա, որն էլ տասնամյակներ անց կպատվի զմրուխտյա կանաչով ու կգեղեցկացնի քեզ: Հաղթելուց հետո կզգաս ունայնություն, կընկնես ունայնության մեջ, որտեղ տիրում է տաք ու վախեցնող անեզր լռություն: Չես գիտակցի, բայց քեզ տաքուկ հողով ծածկողները կգիտակցեն, որ հոգիդ է լռության ունայնությունը, իսկ քեզ համար ունայնությունն է ականջ ծակող լռություն:

Քեզնից կվախենան, բայց կհարգեն, թեպետ միայն ծխելիս, իսկ երբ ծխախոտն իր վերջին մոխիրը ցած նետի, նույն ծխողն էլ նույն հողի վրա կնետվի ու կնետի թե՞ իրեն, թե՞ ծխախոտը: Հետո կգնա հիշատակդ, բաժակ բարձրացնելով, ատամի անցքից կանաչին հանելով կհարգի ու երբ դուրս գա, որովայնը քորելով կթքի ու կմեղադրի աստծուն «լավ» մարդկանց տանելու համար, գիտակցելով, որ նա պետք է լիներ…

Աստղախիտ, արհեստական լույսերով պարուրված երկնքում, հազիվ էին նշմարվում ընկնող աստղերը, որոնք հասնելով երկիր դառնում էին նորածին հրեշներ, իսկ լուսինը հերթով ճանապարհում էր նրանց՝ տիեզերքում թողնելով բազմաթիվ բյուրեղներ: Ալբերտը պատկերացրեց, թե ինչ դժվար է այդ բաժանումը լուսնի համար: Նա չէր մտածի, եթե այդ 4 պատերը չազդեին նրա լուսամուտի վրա: Աչքերից սկսեց արյուն հոսել, արցունքի պես թափվող ապակիների պատճառով, որոնք քերծելով, ճղելով կամ խրվելով մաշկի մեջ աննկարագրելի ցավ էին պատճառում, իսկ աչքերը փակել չէր կարող…

Շրջվեց ու փակեց լուսամուտը:

Սեդա ԹՈՎՄԱՍՅԱՆ
Հենակետային վարժարան (ավագ դպրոց)
11/3 դասարան

Կրթված մարդը նաև ռազմիկ է իր երկրի համար

Կրթված մարդը նաև ռազմիկ է իր երկրի համար, քանզի գիտակցում է, որ հայրենիքը բացարձակ արժեք է: Այս միտքը կարմիր թելով անցնում է հայ գրականության միջով: Այդ մասին խոսվեց ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի բաց դասերի ընթացքում՝ Գիրք նվիրելու միջազգային օրվան (աշխարհում նշվում է փետրվարի 14-ին, իսկ Հայաստանում՝ փետրվարի 19-ին՝ նվիրված հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվան) և Մայրենի լեզվի միջազգային օրվա (հաստատվել է 1999 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից և նշվում է փետրվարի 21-ին, իսկ Հայաստանում պետական մակարդակով՝ 2006 թվականից) տոներին ընդառաջ:

Այս դասերի շրջանակներում ևս մեկ անգամ ճամփորդություն կատարվեց Մաշտոցի ոսկեդարյան ժամանակաշրջանից մինչև հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանի լուսավորչական գործունեությունը:

Դպրոցի սաները ծանոթացան հայ գրականության առանցքային

պատմավեպերի՝ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Ռաֆֆու «Սամվել» և Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» ստեղծագործություններին, որոնք տարբեր ժամանակներում պահել են հայ ժողովրդի անկոտրում ոգին: Հատկանշական է, որ ներկայացնելով Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» ստեղծագործությունը, խոսվեց ոչ միայն վեպի բովանդակության մասին, այլ ակնարկ եղավ նաև Վարդանանց տոնին (սույն թվականին նշվում է 12.02.2026), ինչպես նաև Վարդենիսում գտնվող սրբատեղի մասին, որտեղից, ըստ ժողովրդական զրույցների, իրենց ծարավն են հագեցրել և ուժ ստացել Վարդան Մամիկոնյանի զինվորները և ձիերը:

Այսօր դպրոցի ուսուցիչներն իրենց առջև նպատակ են դրել Վարդանանց ոգին և ազգանվիրումը դարձնել առաջնորդող ուժ՝ ժամանակակից հայ սերնդին հայրենիքից դուրս կրթելու և դաստիարակելու գործընթացում:

Ազգը հզոր է ոչ միայն իր գիր ու գրականությունով, այլ դարերով ստեղծված ու պահպանված ավանդույթներով: Ուստի Տեառնընդառաջի (Տրնդեզ) և Բուն Բարեկենդան (սույն թվականին նշվում է 15.02.2026), տոներին ընդառաջ ներկայացվեցին ոչ միայն տոների պատմությունն ու խորհուրդը, այլև ծիսական երգերը, պարերն ու խաղերը:

Հատկանշական է, որ բաց դասերի վերջում երեխաները նվեր ստացան՝ տետրեր Մեսրոպ Մաշտոցի պատկերով, որտեղ պետք է շարադրություն գրեն «Իմ Հայրենիքը» թեմայով և գրի առնեն հայ մեծերի իմաստուն խոսքերը:

Ամփոփելով մեր պապերի անցած ուղին, միահյուսելով նորարական կրթական մոտեցումների հետ՝ «Վերածնունդ» դպրոցի ուսումնական կազմը դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի գլխավորությամբ նպաստում է, որպեսզի հայրենիքից հեռու գտվող մոսկվայաբնակ աշակերտները լավ ճանաչեն սեփական պատմությունը, իմանան հերոսներին ու նրանց սխրագործությունները, գիտակցեն, ներդնեն իրենց հնարավորությունները ժամանակակից աշխարհում՝ ի բարօրություն մեր հայ ազգի և Հայաստան աշխարհի:

Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ